ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«28» ապրիլ 2026թ No 2368-Հ

«ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առողջապահության նախարարության կողմից 20.03.26թ. հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/34» ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի մարտի 31-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2026 թվականի ապրիլի 1-ին ժամը 11:00-ին: 2026 թվականի ապրիլի 2-ին ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը գնահատելու նպատակով: Հայտ են ներկայացրել թվով 10 կազմակերպություններ, որոնցից 7-ը առաջին տեղ զբաղեցնողներ՝ այդ թվում «Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն): Բացի «Երմեդ» և «Մեդթրեյդ» ՍՊԸ-ից, մնացած բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա են եղել շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ և վերոնշյալ գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.11 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 02.04.2026թ. ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված՝ Կազմակերպությանը ներկայացված շտկման ծանուցումը.

««ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես հրավերի պահանջով ներկայացված Հավելված 1-ը ստորագրված չէ՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում-հայտարարությունը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Հայտում ներառվող փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում չեն կնքվում, ինչպես նաև հրավերով սահմանված պահանջներով մասնակիցը պետք է ներկայացնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված՝ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան) ՀՀ ռեզիդենտը, ինչը ներկայացված չի, անհրաժեշտ է ներկայացնել: Անհրաժեշտ է շտկել նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 4-րդ չափաբաժնի համար նշել հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև նշված չափաբաժնի համար ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նշված չափաբաժնի համար նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև որակի վկայականները՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր,

չօգտագործված լինելու հանգամանքը՝ բացառելով «պետք է» լինի արտահայտությունը, այլ հստակ նշվի: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:»:

Սահմանված ժամկետի ավարտին՝ 06.04.2026թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի են եղել մասնակցի կողմից ներկայացված պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով Կազմակերպության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ Կազմակերպության կողմից պահանջվող շտկումները ընդհանրապես իրականացված չեն: Ուստի «Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման և հիմք ընդունելով 04.05.2017թ. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 19-րդ մասը՝ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, «Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պահանջված շտկումը չիրականացնելը համարել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ և վերոգրյալ գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.11 և 8.15 կետերի պահանջները գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում՝ Կազմակերպության հայտը գնահատել անբավարար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի (**համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, որից ելնելով վերոգրյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված չի եղել հայտի ապահովման ներկայացման պահանջ, որովհետև չափաբաժինների գնման գները չեն գերազանցել 25 միլիոն դրամը**), պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները: Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/34	4	կշեռքներ	640,000	«Արսշին 91 Գրուպ» ՍՊԸ	01091058	Ք. Երևան, Նոր Նորք Մոլդովական 60 0062	18.04.2026թ.	Առողջապահության նախարարություն	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, որի արդյունքում հայտը գնահատվել է անբավարար)	Առկա չէ

ՀՐԱՄԱՆՏՈՎ
ՀԱՄԱՐ
ДЛЯ
ПРИКАЗОВ

4/28/2

ՊՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 68027

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ